ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի»
նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի
վերաբերյալ հանրային լսումների (քննարկումների) երրորդ փուլի

ՀՀ, Լոռու մարզ, գ. Թեղուտ Արձանագրությունը կազմվել է 2017 թվականի հոկտեմբերի 06-ին

2017 թվականի հոկտեմբերի 04-ին ժամը 13:00-ից մինչև 13:55-ը ՀՀ Լոռու մարզի Թեղուտ համայնքի մշակույթի տանը (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ.Թեղուտ, 1-ին փողոց, թիվ 3) տեղի ունեցան ՀՀ Լոռու մարզի Թեղուտ համայնքի ղեկավարի (այսուհետ նաև՝ Քննարկումների պատասխանատու) և «Թեղուտ» ՓԲ ընկերության կողմից «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (մասնավորապես՝ 26-րդ հոդվածի) և ՀՀ կառավարության 19.11.2014թ. «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» №1325-Ն որոշմամբ հաստատված հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգի համաձայն հրավիրված՝ «Թեղուտ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման արդյունքներն ամփոփող հաշվետվության վերաբերյալ հանրային լսումներ (քննարկումներ):

Հանրային քննարկումներն անց էին կացվում «Թեղուտ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման՝ երրորդ փուլի շրջանակներում: Հանրային քննարկումների վերաբերյալ հանրային ծանուցումն իրականացվել էր զանգվածային լրատվամիջոցներով և էլեկտրոնային հայտարարություններով: Մասնավորապես, հանրային լսումների վերաբերյալ հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2017 թվականի սեպտեմբերի 21-ի թիվ 164 (6685) համարում, տեղադրվել է նախաձեռնող «Թեղուտ» ՓԲ ընկերության պաշտոնական կայքում (www.teghout.am):

Հանրային լսումներին (քննարկումներին) մասնակցում էին ՀՀ Լոռու մարզի Թեղուտ և Շնող համայնքների ավագանու անդամներ, համայքների բնակիչներ, նախաձեռնող ընկերության ներկայացուցիչներ, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, ընդամենը՝ 27 անձ: Հանրային լսումների (քննարկումների) ամբողջ ընթացքը տեսաձայնագրվել է առանց ընդհատումների: Մասնակիցների ցանկը ստորագրություններով և հանրային լսումների (քննարկումների) ընթացքի տեսաձայանգրությունը՝ համապատասխան սկավառակով կցվում են սույն արձանագրությանը:

Հանրային լսումները (քննարկումները) վարել է Քննարկումների պատասխանատուն, ով նաև ապահովել է արձանագրումը: Մինչև հանրային լսումների (քննարկումների) սկիզբը հանրության կողմից գրավոր դիտողություններ և առաջարկություններ չեն ներկայացվել, ինչի մասին հայտարարվել է նաև քննարկումների ընթացքում: Գրավոր դիտողություններ և առաջարկություններ չեն ներկայացվել նաև հանրային լսումներից (քննարկումներից) հետո՝ մինչև սույն արձանագրության կազմման պահը:

Բացելով հանրային քննարկումները Քննարկումների պատասխանատու՝ ՀՀ Լոռու մարզի Թեղուտ համայնքի ղեկավար Ֆրունզե Նորեկյանը նախ ողջունեց բոլոր ներկաներին և շնորհակալություն հայտնեց քննարկումներին մասնակցելու համար, այնուհետև ներկայացրեց հանրային լսումների (քննարկումների) նպատակն ու օրակարգը, որից հետո խոսքը տվեց նախաձեռնող ընկերության ներկայացուցչին:

Նախաձեռնողի անունից ելույթ ունեցավ «Թեղուտ» ՓԲ ընկերության (այսուհետ նաև՝ Նախաձեռնող) գլխավոր տնօրենի տեղակալ Սահակ Կարապետյանը և ներկայացրեց Նախաձեռնողի կողմից

ներկայացված «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման շրջանակներում իրականացված գործողությունները: Նա մասնավորապես նշեց, որ «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական փորձաքննության արդյունքում՝ 31.08.2017թ. ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ կողմից Նախաձեռնողին է տրվել նախատեսվող գործունեության թիվ ՏԱ 44 տեխնիկական առաջադրանքը, որի համաձայն Նախաձեռնողը կազմակերպել է «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման գործողությունները և կազմել է համապատասխան լրամշակված հաշվետվությունը: Նա նաև նշեց, որ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ կողմից լրամշակված՝ «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը սույն հանրային լսումների վերաբերյալ հայտարարության հետ միասին (մեկ հղումով) տեղադրվել են Նախաձեռնողի պաշտոնական կայքում (www.teghout.am), իսկ դրա թղթային տարբերակը՝ նաև Քննարկումների պատասխանատուի նստավայրում, որով ապահովվել է հանրության՝ դրա բովանդակությանը ծանոթանալու հնարավորությունը:

Անդրադառնալով բուն հանրային քննարկումներին Ս.Կարապետյանը նշեց, որ սույն հանրային քննարկումները հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգով սահմանված բնորոշմամբ հանդիսանում են երրորդ փուլի հանրային քննարկումներ, որոնք անց են կացվում Նախաձեռնողի կողմից ներկայացված «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման փուլի շրջանակներում: Սույն հանրային քննարկումների հիմնական նպատակը Նախաձեռնողի կողմից նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների (տեխնիկական առաջադրանքին համապատասխան կատարված) մասին պատշաճ և ամբողջական տեղեկատվության տրամադրումն ու հանրության կողմից բարձրացվող հարցադրումներին պատասխանելն է:

Ելույթ ունեցավ նախագծող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Հովիկ Նիկողոսյանը, ով ներկայացրեց «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման շրջանակներում՝ ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ կողմից 31.08.2017թ. տրամադրված թիվ ՏԱ 44 տեխնիկական առաջադրանքին համապատասխան կատարված գործողությունները, ինչպես նաև դրանց արդյունքում լրամշակված հաշվետվության հիմնական տվյալները: Նա նաև պատասխանեց քննարկումների մասնակիցների կողմից բարձրացվող՝ հաշվետվությունում արտացոլված առանձին տվյալների (ցուցանիշների) ներկայացմանը վերաբերող հարցերին, հրապարակելով հաշվետվությունում ներառված համապատասխան տվյալները:

Հանրային լսումների (քննարկումների) մասնակիցները Նախաձեռնողի կողմից ներկայացված՝ «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ բանավոր դիտողություններ և առաջարկություններ չարեցին:

Միաժամանակ, ներկաների կողմից բարձրացվեցին Շնող և Թեղուտ համայնքների բնակիչներին հուզող մի շարք հարցեր: Մասնավորապես, Շնող համայնքի ղեկավար Դ.Ղումաշյանը բարձրացրեց Շնող գյուղի ջրատարի հարցը, որի խողովակաշարը ներկայում անցնում է Նախաձեռնողի պոչամբարի համար նախատեսված տարածքով և առաջիկայում դրա տեղափոխման կարիք է առաջանալու: Նա նաև բարձրացրեց Շնող համայնքի մասնավոր հողամասերը ոռոգելու նպատակով Դեբեդ

գետի վրա կառուցված պոմպակայանում որոշակի տեխնիկական ձևափոխություններ կատարելու անհրաժեշտության հարցը:

Նախաձեռնող ընկերության ներկայացուցիչը խոստացավ Շնող համայնքի ղեկավարության հետ քննարկել բարձրացված հարցերի լուծման հնարավորությունները, անհրաժեշտության դեպքում ներգրավելով համապատասխան մասնագետների (մասնագիտացված կազմակերպությունների) և աջակցել ընտրված լուծումների կենսագործման հարցերում:

Անդրադառնալով նախորդ փուլի հանրային քննարկումների շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությանը Նախաձեռնողի ներկայացուցիչը նշեց, որ Նախաձեռնողը՝ Շնող և Թեղուտ համայնքների ղեկավարների աջակցությամբ կազմակերպել է Շնող և Թեղուտ համայնքների առանձին բնակիչների մասնավոր այգեգործական տնտեսություններում հողային ծածկույթի նմուշարկումները: Մասնավորապես, 2017 թվականի սեպտեմբերի 1-ին համապատասխան նմուշներ են վերցվել Շնող համայնքի բնակիչներին պատկանող թվով 16 մասնավորական հողամասերից և թվով 2 այլ կետերից, իսկ 2017 թվականի սեպտեմբերի 26-ին նմանատիպ նմուշներ են վերցվել Շնող և Թեղուտ համայնքների թվով 6 մասնավորական հողամասերից: Նա նաև նշեց, որ հիշյալ նմուշարկումների արդյունքում առանձնացված նմուշներում առկա քիմիական նյութերի վերաբերյալ անալիզները ներկայում դեռևս ավարտված չեն և սպասվում է, որ դրանք պատրաստ կլինեն առաջիկա 10 օրվա ընթացքում: Կատարված քիմիական անալիզների արդյունքները Նախաձեռնողի կողմից կտրամադրվեն համապատասխան հողամասերի սեփականատերերին, ովքեր հնարավորություն կունենան այլ մասնագիտացված լաբորատորիայում ստուգել նմուշարկման շրջանակներում առանձնացված և իրենց մոտ պահվող ստուգողական նմուշները ևս: Անհրաժեշտության դեպքում՝ Շնող և Թեղուտ համայնքների ղեկավարների ներգրավմամբ, Նախաձեռնողը համապատասխան քննարկում կկազմակերպի կատարված քիմիական անալիզների արդյունքների ու դրանց առնչվող այլ հարցերի շուրջ:

Ամփոփելով քննարկումները Քննարկումների պատասխանատուն և Նախաձեռնողի ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին բոլոր ներկաներին հանրային լսումներին (քննարկումներին) մասնակցության համար և առաջարկեցին օգտվել օրենսդրությամբ սահմանված հնարավորությունից և Նախաձեռնողի կողմից ներկայացված «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հնարավոր առաջարկությունները և դիտողությունները ՀՀ կառավարության 19.11.2014թ. «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» №1325-Ն որոշմամբ կարգով սահմանված ժամկետներում գրավոր ներկայացնել Նախաձեռնողին (այդ թվում միջնորդավորված՝ Քննարկումների պատասխանատուի միջոցով), որպեսզի Նախաձեռնողի պատասխանների հետ միասին դրանք ներառվեն գնահատման հաշվետվության կազմում:

Քննարկումների պատասխանատու՝

ՀՀ Լոռու մարզի Թեղուտ համայնքի ղեկավար Ֆրունզե Նորեկյան

Ձեռնարկող՝

«Թեղուտ» ՓԲ ընկերություն

Գլխավոր տնօրենի տեղակալ Սահակ Կարապետյան